

**ՀՅԴ Հայ Դատի Յանձնախումբերու Եւ Գրասենյակներու
Խորհրդածողով Հայրենիքի Մէջ
«Լեռնային Ղարաբաղի Ժանաչման Խնդիրը
Հայ Դատի Առաջնահերթութիւններէն Է»**



Կարդալ էջ 5

Իրանի Ընտրություններուն Յաղթած ԵՄ ՀՅԴ-ի 2 Թեկնածուներ

Իրանի մէջ տեղի ունեցած խորհրդարանական ընտրութիւններուն արդիւնքներէն ի յայտ եկաւ, որ ընտրուած են Հայ Յեղափոխական Դաշնակցութեան կողմէ առաջադրուած 2 թեկնածուներ: Անոնցմէ մէկը Զուլալի մէջ առաջադրուած Ռոբերտ Բեգլարեանն է, որ արդէն խորհրդարանին մէջ Հարաւային Իրանի քրիստոնեայ Հայ փոքրամասնութեան ներկայացուցիչն էր: Միւսը՝ Թեհրանէն այս անգամ առաջադրուած Արա Շահբերդեանն է:

**Նախարար Մնացականեան Տեսակցեցաւ Հայ Դատի
Յանձնախումբերու Ներկայացուցիչներուն Հետ**

Հայաստանի Հանրապետության արտաքին գործոց նախարարության մէջ 23 փետրուարին տեղի ունեցաւ նախարարութեան ղեկավար կազմի Հանդիպումը Հայ դատի յանձնախումբերու ներկայացուցիչներուն հետ: Այս մասին կը հաղորդեն նախարարութենէն:

Ողջունելով յանձնախումբերու ներկայացուցիչները՝ նախարար Մնացականեան բարձր գնահատեց կայացումը նման ձեւաչափով հանդիպման, որ իր նպաստը պիտի բերէ Հայաստանի արտաքին քաղաքականութեան կարեւոր սկզբունքներէն մէկուն՝ համահայկականութեան արդիւնաւէտ իրականացման: Նախարարը նաեւ համոզմունք յայտնեց, որ նման ձեւաչափով հանդիպումներ կը կրեն պարբերական բնոյթ եւ կը նպաստեն Հայաստանի ու սփիւռքահայ կազմակերպութիւններու համագործակցութեան ձեւաւորման եւ ամրապնդման:

Արտաքին գործոց նախարարը Հանդիպման մասնակիցներուն ներկայացուց Հայաստանի արտաքին քաղաքականութեան առաջնահերթութիւնները եւ գերակայութիւնները, չըջանալին եւ միջազգային օրակարգի հրատապ հարցերու շուրջ Հայաստանի դիրքորոշումը եւ անոնց հասցէագրման ուղղութեամբ ձեռնարկուող քայլերը:

**Բալօ Սահակեան Մասնակցեցաւ Հայ Դատի
Յանձնախմբերու եւ Գրասենեակներու
Խորհրդածողոյի Բացման Հանդիսութեան**



Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյան, Փետրուար 25-ին, մասնակցած է Ստեփանակերտի մէջ մեկնարկած Հայ Դատի յանձնարումը բերու եւ գրասենեակներու խորհրդաժողովի բազման Հանդիսութեան:

Իր ելույթին մէջ նախագահ Սահակեան նշած է, որ Հայ Դատը այն համահայկական կառույցն է, որ տասնամեակներ շարունակ յամուռ պայքար կը մղէ մեր համազգային խնդիրներու լուծման ուղղութեամբ՝ յատուկ ուշադրութիւն դարձնելով Արցախին:

Խորհրդաժողովի բացման ընթացքին նախագահ Սահակեան Հայ Յնդափոխական Դաշնակցութեան Հայ Դատի կեդրոնական խորհուրդը պարգեւատրած է «Երախտագիտութիւն» մետալով՝ Արցախի Հանրապետութեան միջազգային ճանաչման ուղղուած աշխոյժ գործունէութեան, Արցախ-Սփիւռք կապերու ամրապնդման ու զարգացման գործին մէջ ներդրած նշանակալից աւանդին համար:

Բացումին ներկայ եղած են Հայ Առաքելական Եկեղեցւոյ Արցախի Թեմի առաջ-
նորդ Պարգեւ արքեպիսկոպոս Մարտիրոսեանը, Ազգային Ժողովի նախագահ Աշոտ
Ղուլեանը եւ պաշտօնատար այլ անձեր:

[illegible]



Al-Nejmah

MIDDLE EASTERN SUPERMARKET

NOW OPEN



Սեփականատեր
Յարութ Միփան

Ընտանեկան բացառիկ գործառնություն
ուր կը գտնէք ձեր բոլոր կարիքները
ուտելիքներու վերաբերեալ

 **IN HOUSE**

COFFEE ROASTING & GRINDING
ROASTING FRESH NUTS
SESAME GRINDING TO MAKE FRESH TAHINA
TANOOR BREAD & IRAQI SAMOON

Մուրճ աղալ եւ խարկել
Հնտեղէն աղալ օրական դրութեամբ
Շուշմայ աղալ եւ թահինի պատրաստել
Թոնիիի հաց եւ իրաքեան սոմուն

Supermarket | Restaurant | Bakery | Halal Butcher
Վաճառատուն, ճաշարան, փուռ, մսավաճառ

PHONE: 289.232.1200
3085 Hurontario St, Unit 1-6, Mississauga



ԿԻԶԱԿԷՏ Պատեհ առիթ ստեղծել փորձողներուն

Կարգ մը անհատներ ամէն առիթ կը գործածեն իրենց անհատական կարծիքները արտայայտելու, մանաւանդ այն հարցերուն մասին, որ կը վերաբերի իրենց սեփական ասպարէզին ու առօրեային: Բայց եւ այնպէս, անհրաժեշտ է նկատի առնել եւ լաւ գիտնալ կարգն ու պատշաճը եւ մարդոց իրաւասութիւններն ու չափի սահմանը:

Վերջերս, Հ.Յ.Դաշնակցութեան Հայաստանի գերագոյն մարմինի ներկայացուցիչ` Ընկ. Իշխան Սաղաթելեանի Ա.Մ.Նահանգներու մէջ կատարած մէկ մեկնաբանութեան լոյսի տակ, համացանցին էջերուն մէջ դժգոհութեան ալիք մը բարձրացաւ կանոնադանց կեցուածքի մէջ գտնուող եւ կանոնադրի համապատասխան տնօրինում ստացած անձանց, ինչպէս նաեւ մօտիկ անցեալին նոյն ճակատագրին ենթարկուած անձերու կողմէ , որոնք մեծ մասամբ գրիչ հոսեցնող հրապարակախօսներ եւ տարիներու վաստակ ունեցող անձեր են :

Ինծի համար զարմանալի կը թուի, թէ որքան որ ալ արդարացի ըլլայ անոնց մտահոգութիւններն ու ներկայացուցած արտաճանաչումները, թոյլատրելի չէ այդ հաստատումները կատարել հրապարակաւ, մամլոյ էջերով եւ կամ համացանցի ճամբով, քաջ գիտնալով հետեւանքներն ու արդիւնքը:

Դժբախտութիւն է, որ մարդիկ իրենց բռնած ձախաւեր ուղիով ջուր կը լեցնեն այն հոսանքներու ջաղացքին, որոնք կ'ուզեն պառակտում ստեղծել ազգային հաւաքականութիւններուն մէջ :

Ինչո՞ւ վրդովիլ որակաւորումներու չափին ու կշիռին նկատմամբ, ի՞նչ կը փոխուի իրականութենէն, երբ ոմանք ընտրած են փակ ճանապարհ տանող յուսահատ ու սպառիչ ուղին : Թերեւս նոյն այդ ճարտար գրիչ հոսեցնողներուն յօդուածներուն ընդմէջէն տեղեկացած ենք, որ դաշնակցութեան պատմութեան ընթացքին պատժական տնօրինումներու ենթարկուած են շատ մը վեհօթիւններ: Բայց պէտք է լաւ գիտնալ, որ Դաշնակցութեան կանոնադրին դիմաց չկան մեծեր ու փոքրեր, չկայ երկու չափ երկու կշիռ, կայ մէկ իրականութիւն, երբ մարդիկ կը կորսնցնեն իրենց համբերութիւնն ու ունակութիւնը, որքան ալ մեծ ըլլայ անոնց համբաւն ու վաստակը, կը դատուին օրէնքին դիմաց :

Վերջապէս, լաւ գիտենք, որ սխալները սխալ ժամանակի ու վայրի մէջ ներկայացնելը նոր սխալներու պատճառ կը հանդիսանան, ուստի, ինչո՞ւ վշտանալ, երբ մեղքը ձերն է եւ ո՛չ ուրիշինը: Բերդը գուրսէն կը կառուցեն , բայց ներսէն կը պաշտպանէն :

Վիգէն Գէորգեան

Սուրիական Աղբիւրները Կը Վկայեն Հայոց Ցեղասպանութեան Իրողութեան Մասին. Դոկտ. Նորա Արիսեան

13 փետրուար 2020-ին, Սուրիոյ խորհրդարանը միաձայնութեամբ՝ ճանչցաւ ու դատապարտեց Հայոց ցեղասպանութիւնը։ Այս առիթով, «Գանձասար» հետեւեալ հարցազրոյցը ունեցաւ Սուրիոյ խորհրդարանի երեսփոխան, Սուրիա–Հայաստան խորհրդարանական բարեկամութեան յանձնաժողովի նախագահ՝ դոկտ. Նորա Արիսեանի հետ։

«ԳԱՆԶԱՍԱՐ».- Հայոց ցեղասպանութեան հարցը նախապէս ալ արծարծուած էր Սուրիոյ խորհրդարանէն ներս, այս անգամ, սակայն, խորհրդարանը քայլ մըն ալ առաջ երթալով՝ Ցեղասպանութիւնը ճանչցող ու դատապարտող որոշում կայացուց։ Ինչպիսի՞ գարգացումներու պատճառով այս յառաջընթացը արձանագրուեցաւ։

ՆՈՐԱ ԱՐԻՍԵԱՆ.- Նախքան 13 փետրուար 2020-ի Սուրիոյ խորհրդարանի նիստին Հայոց ցեղասպանութեան մասին բանաձեւին օրակարգի վրայ տեղ գտնելը, 20 յունուար 2020-ին Սուրիա–Հայաստան խորհրդարանական բարեկամութեան յանձնաժողովը, որ հեղինակն է Ցեղասպանութեան ճանաչման բանաձեւի նախագիծին, գումարեց իր արտակարգ նիստը, ուր Հայոց ցեղասպանութեան ճանաչման հարցը լայն քննարկման առարկայ դարձաւ։ Այնուհետեւ, յանձնաժողովը նիստին տեղեկագիրը ներկայացուց խորհրդարանի նախագահութեան, որպէսզի խորհրդարանական ժողովի օրակարգի կէտ դառնայ ան։ Պէտք է ընդգծել, որ 2015-ին, Հայոց ցեղասպանութեան 100-ամեակին առիթով, խորհրդարանը յատուկ նիստ տրամադրած էր Հայոց ցեղասպանութեան հարցի քննարկման։ Միւս կողմէ, սոյն նստաշրջանին, տարբեր առիթներով, կարգ մը երեսփոխաններ դատապարտման հարցին արձագանգած էին։

«Գ».- Դուք, ձեր մասնագիտութեան բերումով, ուսումնասիրած էք Հայոց ցեղասպանութեան առնչուող Սուրիոյ վաւերագրական արխիւները, մամուլը, սուրիացի մտաւորականներու վկայութիւնները եւ այլն։ Այդ բոլորը ինչպիսի՞ արժէք կը ներկայացնեն։

Ն. Ա.- Կը խորհիմ, որ գիտահետազօտական աշխատանքները մեծ դեր ունին հարցերու օրինականացման առումով, մանաւանդ՝ սուրիական աղբիւրները, որոնք անժխտելիօրէն կը վկայեն Հայոց ցեղասպանութեան պատմական իրողութեան մասին։ Քննարկման ընթացքին անհրաժեշտ էր ներկայացնել սուրիական աղբիւրներ, որոնք արդէն իսկ բազմաթիւ վկայութիւններ կը պարունակեն։ Վկայութիւններ, որոնք հիմք հանդիսացան նաեւ Հայոց ցեղասպանութեան առնչուող բանաձեւին, որուն մասին աւելի քան մէկ ժամ տեւած ելոյթներով արտայայտուեցան սուրիացի երեսփոխաններ։

«Գ».- Սուրիոյ խորհրդարանի ճանաչումը կը տարբերի այլ երկիրներու խորհրդարաններու ճանաչումէն, որովհետեւ Սուրիան ու անոր ժողովուրդը վկաներն են նաեւ Ցեղասպանութեան։ Աւելի քան 105 տարի անց, երկրի ներկայ պայմաններուն մէջ, ի՞նչ ուղեբձներ կը պարունակէ այս ճանաչումը միջազգային ընտանիքին։

Ն. Ա.- Սուրիոյ խորհրդարանին կողմէ որդեգրուած բանաձեւին մէջ յստակօրէն կ'օգտագործուի «Հայոց ցեղասպանութիւն» բառեզրը եւ զայն դատապարտելու ու ճանչնալու հանգամանքը։ Կարեւոր հնչեղութիւն ունեցաւ նաեւ բանաձեւին մէջ խորհրդարանին կոչը՝ ուղղուած աշխարհի խորհրդարաններուն եւ միջազգային հանրութեան՝ ճանչնալու եւ դատապարտելու Հայոց ցեղասպանութիւնը։ Բանաձեւը կը պարունակէ մարդկային, քաղաքական եւ իրաւական ուղերձներ։

www.horizonweekly.ca

	
Aline Shnorhokian Mortgage Advisor Tel: 1 866 231-8876 Fax: 450 688-7555 Cell: 514 797-1375 aline.shnorhokian@cibc.com	

	 ALBERT ARKILANIAN (Courtier immobilier résidentiel) Residential Real Estate Broker aarkilanian@sutton.com Cell: 514.962.8822 Bur: 514.426.9595 Fax: 514.426.9596 *certaines conditions s'appliquent
Satisfaction garantie ou je revends votre propriété gratuitement!	

	Tro Bachejkian Représentant des ventes Véhicules d'occasion Pre-owned Sales Consultant tbachejkian@gabriel.ca Tél.: 514 327-7777 Poste: 4139 Télééc.: 514 262-8019
 7000, boul. Henri-Bourassa Est Montréal-Nord, QC H1G 8C4 www.hondagabriel.com	
 CONCESSIONNAIRE DE QUALITÉ	

	École De Conduite 	Driving School
Tel: 514-336-1110		
Moniteur-Instructeur AUTOECOLEAZIG@HOTMAIL.COM 1400, rue Sauvé O, Montréal, QC H4N 1C5, Suite 1438 Centre Adonis II		

	Personal & Corporate Tax Returns Financial Statements Bookkeeping Business Plan
NATALIE SKAFF, CPA, CGA Comptable Professionnelle Agréée Chartered Professional Accountant nat.skaff@gmail.com Tél. (514) 963 3363 2866 Rue De Chamonix Saint-Laurent, Québec H4R 3B7	
Services available in Armenian, Arabic, English and French	

BRING YOUR OWN WINE	
	
550 Curé Labelle, suite 17, Ste-Rose, QC H7L 4V6 Tel: 450.937.4064 Email: resto.nazareth@hotmail.com	

SAMUEL TOPALIAN 450 682-1644	
AUTO SAMSON	
	
MÉCANIQUE GÉNÉRALE - REMORQUAGE SERVICE DE PNEUS MISE AU POINT	
4700 BOUL. SAMSON, CHOMEDEY LAVAL, QC.	

	 ՀԱՅԿ ԽԱՐԹՈՒՆԻԱՆ Hayk Hartounian Courtier immobilier résidentiel Residential Real Estate Broker C 514.574.6162 B 514.333.3000
---	--

	
CUEILLETTE ET LIVRAISON GRATUITE À DOMICILE ET AU BUREAU (MONTRÉAL ET LAVAL)	
2535 de Salaberry, Montréal	Tél: 514.334.7830

Հայ Երիտասարդութիւնը Պատասխանատու Է Հայաստանի Եւ Հայ Ժողովուրդի Քաղաքական Ծակատագրին

Ստորեւ կը ներկայացնեմք ՀՅԴ Բիւրոյի անդամ Յովսէփ Տէր Գէորգեանի խօսքը՝ ՀՅԴ Հայաստանի երիտասարդական միութեան 7-րդ Պատգամաւորական ժողովի մեկնարկին:

ՀՅ Դաշնակցութեան աշխարհասփիւռ կառոյցի անքակտելի մասնիկն է ՀՅԴ երիտասարդականը:

ՀՅԴ երիտասարդական, ուսանողական եւ պատանեկան միութիւնները կը գործեն աւելի քան 30 երկիրներու մէջ եւ կը հաշուեն աւելի քան 10.000 անդամ:

Կարելի է անվարան հաստատել, որ ՀՅԴ երիտասարդականը հայկական աշխարհի ամենատարածուն եւ ամենաբազմանդամ երիտասարդական քաղաքական կազմակերպութիւնն է:

ՀՅԴ ՀԵՄ–ը՝ որպէս հայրենիքի երիտասարդական մեր միութիւնը, իր ուրոյն ռազմավարական նշանակութիւնը ունի այս համակարգին մէջ:

ՀԵՄ–ի շարքերուն մէջ է, որ պիտի դաստիարակուի Հայաստանի ՀՅԴ կառոյցին յառաջադէմ, գաղափարական, քաղաքականացած եւ կարգապահ երիտասարդութիւնը:

Դաշնակցութիւնը այն կազմակերպութիւնն է, որ անհրաժեշտութիւնը զգացած է իր երիտասարդութեան ինքնակազմակերպման լայն կարելիութիւններ տալու, որպէսզի ան դառնայ ինքնիշխան միաւոր, ուր պիտի թրծուին մեր երիտասարդները բառին ամբողջական առումով՝ իրենց ընտրեալ վարչութիւններով, իրենց գործունէութեամբ, բայց մանաւանդ՝ իրենց յատուկ երիտասարդական խանդով ու յանդգնութեամբ:

Այս հաւաքը լաւագոյն փաստն է, որ այս ժողովը այդ իրականութեան՝ խոր քննարկումներու, առողջ բանավէճերու, առարկայական ինքնաքննադատութեան, խիզախ եւ իմաստուն որոշումներ տալու ժամադրաւայրն է:

Ճաւով կ'արձանագրենք, որ գաղափարական եւ քաղաքականացած երիտասարդութիւնը փոքր համեմատութիւն մըն է մեր շուրջ գտնուող ամբողջային տրամաբանութեամբ առաջնոր-

դուող եւ ապաքաղաքականացած երիտասարդութեան:

Համաշխարհայնացման այս ընդհանուր մթնոլորտին մէջ կան բազմաթիւ հոսանքներ ու շարժումներ, որոնք կը սպառնան երիտասարդութեան եւ ուսանողութեան՝ զանոնք հեռու պահելով գաղափարական, քաղաքական ոլորտէն եւ նետելով այնպիսի օրակարգերու մէջ, որոնք չեն նպաստեր մանաւանդ մեզի նման տակաւին բազում նպատակներ հետապնդող եւ հիմնախնդիրներ ունեցող ազգի մը:

Ներհայկական առումով, այսօր Հայաստանի իրավիճակը կը յատկանշուի ներքին եւ արտաքին ճակատներու վրայ ի յայտ եկող բազմաթիւ զարգացումներով եւ մարտահրաւէրներով:

Աշխարհասփիւռ ՀՅԴ երիտասարդական եւ ուսանողական միութիւնները յանձնառու են հօր, ժողովրդավար, ընկերվար եւ ազգային արժէքներ կրող հայրենի պետականութեան համակարգային փոփոխութիւններու ճամբով կերտման գործին:

Այս ծիրէն ներս ՀՅԴ երիտասարդական եւ ուսանողական միութիւնները եւ յատկապէս ՀԵՄ–ը՝ մերժելով ու պայքարելով հանդերձ այսօր ներքաղաքական իրավիճակը յատկանշող անընդունելի երեւոյթներուն դէմ, ազգային բնոյթի գործունէութեան կողքին, չեղտը կը դնեն եւ պիտի շարունակեն առաւել թափով դնել ընկերվարական բնոյթի ծրագիրներուն, ընկերային արդարութեան, բնապահպանական եւ այլ ընկերա-տնտեսական բնոյթի կառուցողական նախաձեռնութիւններու վրայ:

Սիրելի՛ ընկերներ, Կարեւոր է ամրացնել երիտասարդ-ժողովուրդ կապը, մօտէն հետեւիլ ժողովուրդին դժգոհութեան պատճառներուն եւ մասնաւորապէս աղքատ ու բանուոր դասակարգին եւ գիւղացիին հարցերուն: Այսօր դաշնակցական երիտասարդութիւնը պէտք է ըլլայ պայքարի առաջնագիծին վրայ՝ յանուն երիտասարդութեան եւ ուսանողութեան իրաւունքներու եւ առհասարակ մարդկային իրաւունքներու պաշտպանութեան:

2019–ին ՀԵՄ–ի կողմէ կազմակերպուած համահարթ եկամտայարկի դէմ ահազանգ արշաւը եւ հայ լեզուի ու հայոց պատմութեան պարտադիր դասաւանդման պահանջի շարժումը լաւագոյն դրսեւորումներն էին այս սկզբունքներուն: Այդ օրերուն հակադաշնակցական պայքարի որպէս հակադարձութիւն՝ այն ուժեղ զօրակցութեան ալիքը, որ բարձրացուցին աւելի քան 20 երկիրներու երիտասարդական եւ ուսանողական մեր միութիւնները, լաւագոյն վկան են աշխարհասփիւռ մեր ուժին եւ միասնականութեան:

ՀՅԴ երիտասարդութիւնը կը հաւատայ նաեւ, որ արցախեան ազատագրական պայքարի յաղթական աւարտը ազգերու ինքնորոշման իրաւունքի ծիրէն ներս, Հայաստանի եւ հայութեան իտէպլներու իրականացման նախապայմանն է: Ներկայիս մտահոգութիւններ ունինք արցախեան հիմնահարցին գծով զարգացող գործընթացներուն: ՀՅԴ երիտասարդութիւնը կը մերժէ որեւէ տարածքային գիշում ենթադրական անվտանգութեան փոխարէն եւ իր անվերապահ մասնակցութիւնը կը բերէ Արցախեան պայքարի յառաջընթացի բոլոր ոլորտներէն ներս:

Թրքական պետութեան կողմէ մեր արդար իրաւունքներու հատուցման հարցը պիտի շարունակէ նաեւ իշխող մնալ մեր օրակարգին վրայ: ՀՅԴ աշխարհասփիւռ միութիւնները պիտի մղեն հայ երիտասարդութիւնը, որպէսզի Արեւմտահայաստանը ոչ միայն մեր պատմական հայրենիքը համարէ, այլեւ՝ գրաւուած հայրենիքը, որուն ազատագրման նկատմամբ հաւատքը պիտի մնայ աներբ: Այս շրջագիծէն ներս կարեւոր վերաբերմունքի պէտք է արժանանայ 1920–ին կնքուած Սեւրի դաշնագրին եւ Միացեալ Նահանգներու նախագահ Ուիլսոնի Իրաւարարական վճիռին հարիւրամեակի նշումը 2020–ին:

ՀՅԴ երիտասարդական միաւորները յանձնառու են հայակերտման միտուած ճիգերով՝ նպաստելու սփիւռքի համայնքներու հզօրացման: Սփիւռքի եւ, ինչո՞ւ ոչ, Հայաստանի երիտասար-

դութեան կողմէ ի գործ պէտք է դրուին ջանքեր, որպէսզի սփիւռքի վերակենսաւորման օրակարգը դառնայ տիրական՝ համազգային առումով: Որպէս համահայկական կազմակերպութեան մաս կազմող միութիւն՝ ՀԵՄ–ի ուսերուն դրուած է նաեւ հայրենի եւ սփիւռքի երիտասարդութեան մերձեցման պարտականութիւնը:

Սիրելի՛ երիտասարդներ, միայն առողջ երկխօսութեամբ եւ համախոհութեան մթնոլորտի մէջ հնարաւոր է ձեւաւորել միասնական օրակարգ եւ մէկտեղել համայն հայութեան ուժերը՝ երկրին առջեւ ծառացած խնդիրները լուծելու եւ մեր համազգային նպատակները իրականացնելու համար:

Վերջապէս, մենք պէտք է հասկնանք, որ հայրենիքի կայունութիւնը, անվտանգութիւնը, ժողովրդավարութիւնը, առողջ քաղաքական համակարգի կայացումը եւ միասնականութիւնը երիտասարդութեան եւ քաղաքական բոլոր ուժերուն համար պէտք է հանդիսանան մեր հիմնական սկզբունքները:

ՀՅԴ երիտասարդականի եւ այլ հայկական քաղաքական հասարակական երիտասարդական կազմակերպութիւններու միջեւ, համերաշխութեան եւ երկխօսութեան մթնոլորտի մէջ պէտք է կարելի ըլլայ, ամբողջութեամբ, ամբողջահասակ մօտեցումներէ հեռու, առողջ բանավէճ զարգացնել քննարկելու համազգային տազնապները, ներքաղաքական ամէնէն կնճռոտ խնդիրները եւ մշակելու միացեալ նախաձեռնութիւններու ծրագիրները:

Հայ երիտասարդութիւնը պատասխանատու է Հայաստանի եւ հայ ժողովուրդի քաղաքական ճակատագրին, ինքն է, որ պիտի ճշդէ, թէ՛ ինչ տեսակի Հայաստան կ'ուզէ եւ դէպի ո՛ւր կ'ուզէ տանիլ զայն:

Այս ժողովը անհամար քայլերէն մէկն է, այդ երկար, դժուար, բայց դէպի պայծառ ապագայ տանող յուսատու ճանապարհին:

Յաջողութիւն ձեր աշխատանքներուն»:

 Chadir Meat & Restaurant T. 416-750-7404 T. 416-750-7400 1848 Lawrence Avenue E. Scarborough, ON M1R 2Y4 E-mail: info@ghadirmeatmarket.com	 RE/MAX West Realty Inc., Brokerage Anto Keledjian Sales Representative Residential & Commercial Dir: (416) 930-2686 Bus: (416) 588-6777 570 Bloor St. W., Toronto, ON M5S 1K1 ANTOK13@GMAIL.COM • WWW.TORONTOSOLD.CA	 SUQ 2 Champagne Drive # B9 Toronto, ON M3J 2C5 Tel: (416) 661 8998 www.suqkitchen.ca
 ANI Restaurant 905.761.6484 1450 Clark Ave. West, Thornhill ON L4J 7R5	 Sutton Sutton Group-Admiral Realty Inc., Brokerage 1206 Centre Street, Thornhill, Ontario L4J 3M0 Annie Varbedian Sales Representative Direct: (416) 918-3615 Office: (416) 739-7200 Fax: (416) 739-9367 annievarbed@hotmial.com www.suttongroupadmiral.com	 hearing aid source Andre Ayvazyan HIS B.A.S. andre@HearingAidSource.ca 416 754 4327 (HEAR) Parkway Mall, 85 Ellesmere Rd., #65, Toronto, ON, M1R 4B9
 Gary Chahinian President, Broker of Record 416-258-8892 Gabriel Chahinian Sales Representative 647-580-5818 The Diamond Realty	 I.D.A. Part of the Apothecary family of pharmacies. Pharmacists Sarkis Balian Vartan Balian Maral Abdalian Balian Cassandra Pharmacy Inc. 2040 Victoria Park Ave. Toronto, Ontario M1R 1V2 Tel. : 416.449.2040 Fax : 416.449.2048	 ANI BAKERY ԱՆԻ ՓՈԱՊԱՆ Middle Eastern Pizza Lahmajoun ARSEN DABBAGHIAN 25 Howden Road, Unit #2 Scarborough, Ontario M1R 3C8 Tel: 416.285.7164

ՀՅԴ Երիտասարդութիւնը Կը Մերժէ Տարածքային Որեւէ Զիջում` Ենթադրեալ Անվտանգութեան Դիմաց

Շաբաթ, 22 Փետրուարին սկիզբ առաւ ՀՅ Դաշնակցութեան Հայաստանի Երիտասարդական միութեան 7–րդ պատգամաւորական ժողովը։ Պաշտօնական բաժինի մասնակցած են ոչ միայն դաշնակցականներ, այլ նաեւ Հայաստանի քաղաքական դաշտին մէջ գործունէութիւն ծաւալող կուսակցութիւններու եւ կազմակերպութիւններու երիտասարդ ներկայացուցիչներ։

«Դաշնակցութեան յարատեւութեան գաղտնիքը պայմանաւորուած է անով, որ Դաշնակցութիւնը իր մէջ եւ իր կողքին միշտ ունեցած է հայրենասէր, կազմակերպուած, գաղափարական երիտասարդութիւն, եւ իւրաքանչիւր սերունդ նոր կեանք, նոր շունչ տուած է կուսակցութեան ծրագիրներուն», ՀՅԴ Հայաստանի երիտասարդական միութեան 7–րդ պատգամաւորական ժողովի մեկնարկին ըսաւ ՀՅԴ Գերագոյն մարմինի ներկայացուցիչ Իշխան Սաղաթէլեան։

Ան պատմական ակնարկով ներկայացուց, թէ ՀՅԴ երիտասարդութիւնը ինչպիսի մասնակցութիւն ունեցած է հայրենիքի պաշտպանութեան գործընթացներուն մէջ։

Իշխան Սաղաթէլեանի համաձայն, այսօր աւելի քան որեւէ ժամանակ անհրաժեշտ է Հայաստանի մէջ ունենալ իր ազգային ինքնութիւնը, մշակոյթը խորապէս գիտակցող եւ կարեւորող երիտասարդութիւն՝ ազգային գաղափարախօսութեան տէր, քաղաքականացած երիտասարդութիւն. «Երբեք պայման չէ կուսակցական պատկանելիութիւնը, կարեւորը՝ տեսակէտ, գաղափար, գիրքորոշում ունեցող երիտասարդութիւն ունենալն է։ Մենք կրնանք մեր գաղափարները չկիսողներու, մեր գաղափարները չընդունողներու հետ խօսիլ, գործակցիլ, բայց ամէնէն վատը անտարբեր երիտասարդութիւնն է, ամէնէն վատը այն երիտասարդութիւնն է, որ չունի գիրքորոշում, կեցուածք, մտահոգութիւն իր երկրին, ժողովուրդի ապագային եւ ներկային նկատմամբ», շեշտեց ան։

ՀՅԴ Բիւրոյի երիտասարդական հարցերու պատասխանատու Յովսէփ Տէր Գէորգեան ըսաւ. «ՀՅԴ երիտասարդական եւ ուսանողական միութիւնները, եւ յատկապէս Հայաստանի Երիտասարդական միութիւնը՝ մերժելով եւ պայքարելով հանդերձ այսօրուան ներքաղաքական իրավիճակը յատկանշող անընդունելի երեւոյթներու դէմ, ազգային գործունէութեան հետ մէկտեղ կը շեշտադրեն եւ պիտի շարունակեն յաւելեալ թափով իրականացնել ընկերվարական բնոյթի ծրագիրները, ընկերային արդարութեան, բնապահպանութեան եւ այլ ընկերային–տնտեսական բնոյթի կառուցողական նախաձեռնութիւնները»։

Տէր Գէորգեան՝ անդրադառնալով դարաբաղեան տաղնապի լուծման, ըսաւ. «Այժմ մտահոգութիւններ կան Ղարաբաղեան տաղնապին շուրջ զարգացումներու առնչութեամբ։ ՀՅԴ երիտասարդութիւնը կը մերժէ տարածքային որեւէ զիջում՝ են–

ՀՅԴ Հայ Դատի Յանձնախումբերու Եւ Գրասեմեակներու Խորհրդաժողով Երեւանի Մէջ

24 փետրուարին Երեւանի մէջ հանդիսաւոր կերպով բացումը կատարուեցաւ Հայ յեղափոխական դաշնակցութեան Հայ դատի յանձնախումբերու եւ գրասենեակներու խորհրդաժողովին, որուն կը մասնակցին աշխարհի տարբեր անկիւններու մէջ գործող Հայ դատի աւելի քան 20 յանձնախումբերէ եւ գրասենեակներէ, ինչպէս նաեւ ՀՅԴ կուսակցական մարմիններէ շուրջ 50 ներկայացուցիչներ։

Համաժողովի օրակարգը կը վերաբերի Հայ դատի յանձնախումբերու եւ գրասենեակներու աշխատանքներու բոլոր ոլորտներուն՝ Արցախի տաղնապէն մինչեւ Հայոց ցեղասպանութեան միջազգային ճանաչում, հատուցումներ, Թուրքիա–Ատրպէյճան հակահայ պայքար։

Յակոբ Տէր Խաչատուրեան. «Լեռնային Ղարաբաղի Ճանաչման Խնդիրը Հայ Դատի Առաջնահերթութիւններէն է»

24 փետրուարին Երեւանի մէջ տեղի ունեցած ՀՅԴ Հայ դատի յանձնախումբերու եւ գրասենեակներու խորհրդաժողովին արտասանած իր խօսքին մէջ ՀՅԴ Բիւրոյի ներկայացուցիչ Յակոբ Տէր Խաչատուրեան հաստատեց, որ Հայաստանի սահմանին կանգնած գինուորին թիկունքը հայկական երկրորդ բանակն է՝ ՀՅԴ Հայ դատի ցանցը, որ աշխարհով մէկ կը պաշտպանէ հայութեան շահերը։ Ան մատնանշեց այն 4 ուղղութիւնները, որոնց շեշտադրումով կ'աշխատին Հայ դատի գրասենեակները, եւ որոնք պիտի քննարկուին տուեալ խորհրդաժողովին։

Առաջինը Հայաստանի ու Արցախի Հանրապետութիւններու ուղղութիւնն է. Հայաստանի Հանրապետութեան պարագային, Հայ դատի յանձնախումբերը պետականութեան ամրապնդման աշխատանքին լծուած են, ըսաւ Յակոբ Տէր Խաչատուրեան՝ աւելցնելով, որ Արցախի

պարագային առաջնահերթութիւնը ազատագրումէն ետք հիմնահարցի լուծում գտնելն է՝ ինքնորոշման իրաւունքի կիրառումով, միւս կողմէ, Արցախի ճանաչման հարցը ուղղակիօրէն յառաջ մղել։

Երկրորդ ուղղութիւնը, ըստ անոր, Յեղասպանութեան միջազգային ճանաչման հարցն է մինչեւ վերջնանպատակ՝ Թուրքիոյ կողմէ Յեղասպանութեան ճանաչում եւ պահանջատիրութիւն։ Երրորդը հայապատկան հոգերու վրայ հայութեան իրաւունքներու հարցն է։ Ան շեշտեց, որ Հայաստանէն աքսորի 70 երկար տարիներուն ՀՅԴ–ն աշխատանք տարած է, որ հայութիւնը մնայ միասնական, հայրենակեդրոն եւ ավիւժի մէջ կազմակերպուի ան ու իր աշխատանքը։

Ըստ ՀՅԴ Բիւրոյի ներկայացուցիչին, այս բաժինին վերջին ենթամասը յարաբերութիւններն են Արեւմտեան Հայաստանի մէջ գործող այլ ազգային փոքրամասնութիւններու՝ քիւրտերու, տերսիմցիներու, լեզկիներու հետ, նաեւ աշխարհով մէկ գործակցութիւնը ներկայացուցիչներու հետ այն ժողովուրդներուն, որոնք հայերուն հետ նմանօրինակ անցեալ եւ նման ճակատագիր ունեցած են, երբ Օսմանեան կայսրութեան մաս կազմած են՝ յոյն, ասորի, կիպրացի եւ այլն։

Չորրորդ եւ վերջին ուղղութիւնը հայ ժողովուրդի քաղաքականացման հարցն է, բայց մանաւանդ երիտասարդութեան քաղաքականացումէն ետք զայն տարբեր աշխատանքներու մղելը. «Որպէսզի երբեմն ալ բերդը ներսէն գրաւենք», հաստատեց ՀՅԴ Բիւրոյի ներկայացուցիչը։

Յակոբ Տէր Խաչատուրեան յայտնեց, որ ՀՅԴ Հայ դատի գրասենեակները շարունակական կապի մէջ են արտաքին գործոց նախարարութիւններու հետ՝ թէ՛ Հայաստանի, թէ՛ Արցախի պարագային,



թաղրեալ անվտանգութեան դիմաց եւ իր անվերապահ մասնակցութիւնը կը բերէ դարաբաղեան տաղնապի բոլոր մարզերուն»։

ՀՅԴ–ի համար առանցքային պիտի մնան Հայաստանի Հանրապետութեան ու Արցախի անվտանգութեան առնչուող հարցերը։ ՀՅԴ Հայաստանի երիտասարդական միութեան ժողովին երիտասարդները ներկայացուցին իրենց գործունէութիւնը՝ համահարթ եկամտահարկի դէմ պայքարը, «Բարձրագոյն կրթութեան եւ գիտութեան մասին» օրէնքի նախագիծի դէմ պայքարը եւ այլն, յիշեցուցին՝ ամէն տարի Ապրիլ 24–ին կը կազմակերպեն ջահերով երթը։

Խօսք առաւ Հայաստանի Հանրապետական կուսակցութեան երիտասարդական կազմակերպութեան նախագահ Հայկ Մամիջանեանը, որ նշեց, թէ անկախ գաղափարական հակասութիւններէն, մեր երկրին մէջ քաղաքական ուժերը մէկ ընդհանրութիւն ունին՝ ազգային դիմագիծի պահպանում, ազգային արժէքներու արժեւորում։

ՀՅԴ Հայաստանի երիտասարդական միութեան անդամ Արգիշտի Գէորգեան ըսաւ՝ թէ՛ եւ կուսակցութիւններն ու գաղափարախօսութիւնները տարբեր են, բայց բոլորին նպատակն է տեսնել ազատ, անկախ, յառաջադէմ, հզօր, նաեւ միացեալ Հայաստան։

«Մենք բոլորս երիտասարդներ ենք՝ լեցուած մեծ նպատակներով եւ զանոնք իրագործելու վճռականութեամբ։ Կը նշանակէ՝ տեղ մը բոլորիս շահերը կը համընկնին, ունինք գործելու ընդհանուր դաշտ», ըսաւ Արգիշտի Գէորգեան։

որպէսզի թէ՛ համադրեն կատարուած աշխատանքը, եւ թէ՛ մօտեցումները տարբեր ըլլալու պարագային, փոխանակեն տեղեկատուութիւնը։

Ըստ անոր, խորհրդաժողովին պիտի քննարկուին նաեւ Հայաստան–Թուրքիա յարաբերութիւնները, առհասարակ Թուրքիոյ եւ Ատրպէյճանի հակահայ պայքարի նոր փուլը, Զաւախքի մեր եղբայրներուն ու քոյրերուն իրաւունքներու պաշտպանութիւնը։ «Մեր ուշադրութեան կիզակէտը պիտի ըլլայ նաեւ պոլսահայութեան օժանդակութեան հարցը։ Խորհրդաժողովը պիտի համադրէ մարտավարական քայլերը, քանի որ մէկուն կողմէ գործադրուող յատուկ ծրագիրները կրնան օգտակար օրինակ ըլլալ այլոց համար։ Անհրաժեշտ է, որ այդ յաջողած փորձը կարենանք փոխանակել», ըսաւ Յակոբ Տէր Խաչատուրեան։

Կիրօ Մանոյեան. «Փաշինեան–Ալիեւ Հանգիւղումը Բանակցային Գործընթացին Վրայ Որեւէ Դրական Ազդեցութիւն Չէ Ունեցած»

ՀՅԴ Հայ դատի եւ քաղաքական հարցերու գրասենեակի ղեկավար Կիրօ Մանոյեան՝ անդրադառնալով Միւնիխի մէջ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանի ու Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւի բանավէճին եւ վարչապետին հասցէին կատարուած քննադատութիւններուն, ըսաւ, որ չի կիսեր այն մօտեցումը, թէ նման հրապարակային բանավէճի ժամանակ կ'ըսեն՝ ասիկա ըսաւ, ասիկա չըսաւ։ «Ատիկա բանակցութիւն չէ, ասիկա միայն սահմանափակ ժամանակով, սահմանափակ առիթներով բանավէճ է. թէ բանավէճը ի՛նչ տուաւ, ասիկա ուրիշ հարց է։ Բանավէճը կողմերէն ոչ մէկուն շահերէն կը բխէր, ոչ ալ՝ բանակցութիւններու շահերէն, անիկա պարզապէս կազմակերպիչներու շահն էր։ Կազմակերպիչները յաջողեցան կողմերու ղեկավարները հրապարակաւ բանավէճի

հանել, այդքա՛ն։ Բայց ըսել, որ այս ըսաւ մեր վարչապետը, այն չըսաւ մեր վարչապետը, ատիկա չէ չափանիշը որոշելու այս իշխանութիւններու քաղաքականութիւնը», ընդգծեց ան։

Րաֆֆի Համբարեան. «Արդարութիւնը Պիտի Գայ, Հարցը Միայն Ժամանակն Է»

Լրագրողներուն հետ ունեցած գրոյցին ընթացքին ՀՅԴ Միացեալ Նահանգներու Հայ դատի յանձնախումբի ներկայացուցիչ Րաֆֆի Համբարեան ըսաւ, որ իրենց համար ներկայիս կարեւորագոյն աշխատանքը այն է, որ Ամերիկայի կողմէ Արցախին տրուող օգնութիւնը շարունակական ըլլայ։ «Հոս գործունէութեան մեծ դաշտ կայ, այդ բանավէճերը տեղի կ'ունենան Քոնկրեսի, Սպիտակ տան հետ, կան անձեր, որոնք կ'ուզեն այդ օգնութիւնը դադրեցնել։ Մենք այս առումով պատերազմական դաշտի մէջ ենք։ Նախորդ շաբաթ մօտ 40 հազար մէսէյճ ուղարկեցինք Քոնկրէսին, 10 հազար ամերիկահայ նամակ՝ քոնկրեսականներուն, որ այդ օգնութիւնը շարունակուի», նշեց Համբարեան։

Անդրադառնալով վերջերս Քոնկրեսին կողմէ Հայոց ցեղասպանութիւնը ճանջող բանաձեւին՝ Րաֆֆի Համբարեան ըսաւ. «Մեր նպատակը արդարութեան հասնիլն է, իսկ ատիկա պիտի ըլլայ, երբ որ Սպիտակ տունը եւս խզէ լռութիւնը Յեղասպանութիւնը ճանչնալու հարցով։ Քոնկրեսին որոշումը դրական էր, հիմա յաջորդ քայլը Սպիտակ տունն է, երբ հոն եւս մերժումը յաղթահարենք, արդարութիւնը աւելի մօտ պիտի ըլլայ հայ ժողովուրդին համար։ Մենք հիմա այդ պայքարը կը մղենք, վստահ եմ, որ պիտի շահինք։ Արդարութիւնը պիտի գայ, հարցը միայն ժամանակն է։ Մեր աշխատանքը այդ արդարութիւնը աւելի արագ բերելու մէջ է», յայտնեց Րաֆֆի Համբարեան։

Հանրաքուէն Ինքնադրսեւորուելու Եւս Մէկ Առիթ

Մարտ 2020

Սահմանադրական դատարանին դէմ Հայաստանի գործող իշխանութեան շղթայագերծած խաչակրութեան պատճառներուն ու նպատակներուն մասին շատ կար–դացիինք եւ վստահաբար տակաւին շատ ալ պիտի կար–դանք յառաջիկայ քանի մը շաբաթներու ընթացքին մինչեւ՝ սահմանադրութեան փոփոխութիւններու հան–րաքուէ, որ ըստ հանրապետութեան նախագահի որոշ–ման, պիտի կայանայ ընթացիկ տարուան Ապրիլի 5–ին։

Բազմիցս նշուած պատճառներն ու նպատակները բազմաբնոյթ ըլլալով կը ներառեն ո՛չ միայն երկրի վարչապետի անձնական վրէժխնդրութիւնը այլ նաեւ՝ օրէնսդիր մարմնի, ոստիկանութեան եւ ազգային անվ–տանգութեան ծառայութիւններու կողքին սահմանադ–րական դատարանը եւս իր ազդեցութեան ծիրին մէջ առնելու բազմակարծութիւնը մերժող գործադիր իշխա–նութեան մին իշխանական նկրտումները եւ սահմա–նադրական դատարանին հասցէագրուած (կամ հասցէ–ագրուելիք) շատ մը դատական գործերու ի նպաստ գործադիրի նախասիրութիւններուն լուծումը, որոնց վրայ կու գայ աւելնալու Արցախի հարցին մեզի (հա–յութեան) համար ոչ բարւոք լուծման ճամբայ հարթե–լու ենթադրեալ նախապարաստութիւնը։

Ինչ ալ ըլլան այս խաչակրութեան պատճառներն ու նպատակները, սահմանադրական դատարանի կազմի անդամ դատաւորներու մեծամասնութեան համարեայ բռնի (անօրինական) փոփոխութիւնը, անշուշտ եթէ յա–ջողի, անկասկած պիտի ունենայ քանի մը ուղղութիւն–ներով այնպիսի երկարաժամկէտ ժխտական ազդեցու–թիւններ մեր երկրին վրայ ինչպիսիք են՝ երկրի յաչս միջազգային հանրութեան ժողովրդավար դիմագիծի եւ վարկանիշի զգալի անկումը իր բոլոր ժխտական հետե–ւանքներով եւ հասարակութեան մէջ ազգային, կրթա–կան եւ բարոյական արժեհամակարգի աղաւաղումը պարզ այն պատճառով, որ նորանշանակ սահմանադ–րական դատարանը կազմուած ըլլալով գործադիր իշ–խանութեան կամակատար դատաւոր անդամներէ պիտի չկարենայ կատարել իր գապիչ եւ ուղղիչ դերը գործող իշխանութեան այնպիսի որոշումներուն նկատմամբ՝ երբ այդ որոշումներով ազգային եւ համազգային շա–հերն են, որ կրնան դառնալ խնդրոյ առարկայ։

Յաջողք քանի մը շաբաթներու ընթացքին, մա–մուլը պիտի շարունակէ մեծ տեղ յատկացնել այս հար–ցին։ Պիտի կազմուին սահմանադրութեան փոփոխու–թեան ինչպէս ԱՅՈ՛ւ այնպէս ալ Ո՛Ձ ըսող ճամբար–շտապներ։ Հանրութիւնը պիտի ներքաշուի ԱՅՈ՛ւի եւ Ո՛Ձ–ի ներկայացուցած հիմնաւորումներուն շուրջ ար–ծարծուող վէճի ու վիճաբանութեան մէջ անգամ մը եւս ենթարկուելով գործադիր իշխանութեան կողմէ արհես–տական օրակարգերով գինք երկրի առջեւ ծառացող հիմնահարցերէն հեռացնելու խորամանկ քաղաքակա–նութեան։

Սահմանադրական փոփոխութիւններուն ԱՅՈ՛ւ ըսողները լայնածաւալ բացատրութիւններ պիտի տան թէ ին՞չ չափի ու աստիճանի անարդարութիւններ ու նենգամտութիւններ ի գործ դրած են նախկինները որ–պէսզի հասնին սահմանադրութեան այնպիսի օրինակի, որ կարենայ ապահովել իրենց կողմէ տեղադրուած դա–տաւորներու եւ գլխաւոր դատաւորի իմա՝ սահմանադ–րական դատարանի գործող նախագահ՝ Հրայր Թով–մասեանի երկարաժամկէտ պաշտօնավարումը։ Ո՛Ձ–ի կողմնակիցները իրենց կարգին պիտի մատնացոյց ընեն ու լուսարձակի տակ առնեն սահմանադրութեան եւ հե–տեւաբար սահմանադրական դատարանի անբաղձալի եօթ դատաւորները փոխելու գործադիր իշխանութեան ճիւղի հակասահմանադրական եւ ամենայնոին նենգ նպատակները։

Առանց արհամարհած ըլլալու վերեւ ներկայաց–ուած բազմաբնոյթ (ենթադրեալ թէ իրաւ) նպատակնե–րու եւ պատճառներու յառաջացուած մտահոգութիւն–ները եւ անոնց կարեւորութիւնը, այս խաչակրութեան ետին պէտք է տեսնել նաեւ՝ գործադիր իշխանութեան դրսեւորած արդէն մոլուցքի հասնող յեղափոխութեան եւ յեղափոխութիւններու տեսութիւններով սնող ու ճա–ռող տրամադրութիւններն ու այդ տրամաբանութեամբ ընթացող իրենց քայլերու յաջորդականութեան համա–կարգուած ընթացքը, որ ամբողջապէս կը տեղադրուի «յեղափոխութեան» տրամաբանութեան մէջ։

Այսպէս, վարչապետ՝ Պրն. Փաշինեանի անձով մարմնաւորուած գործադիր իշխանութիւնը կը հաւա–

տայ, որ իր ղեկավարած յեղափոխութիւնը կը մնայ անաւարտ մինչեւ այն ատեն, որ չէ կրցած նոր սահմա–նադրութեամբ մը ինքզինք համակարգայնացնել–(institutionalize)։ Իշխանութիւնը կը հաւատայ, որ յե–ղափոխութիւն գործած եւ այդ ճամբով երկրի ղեկը ստանձնած ոյժին համար, ինքզինք օրինականացնելու միջոցներէն գլխաւորադոյնը սեփական սահմանադրա–կան դատարանով եւ նոր սահմանադրութեամբ իր կողմէ առաջ քաշուած սկզբունքներու սահմանադրութեամբ որդեգրումն ու հաստատումն է, որպէսզի արձանագրուի եւ ամրագրուի վճռորոշ իր դերակատարութիւնը երկրի յառաջիկայ տարիներու որդեգրելիք ուղիին վրայ։

Ծիշդ այս պարունակին մէջ կարելի է տեղադրել գործադիր իշխանութեան կողմէ յեղափոխական բառա–պաշարի եւ գործելաոճի շարունակական օգտագործու–մը։ Ինչո՞ւ. որովհետեւ միայն յայտարարութիւնները բաւարար չեն այլ՝ իշխանութիւնը պէտք ունի ժողո–վուրդի մասնակցութեամբ «գործողութիւններով» ինք–նահամոզուելու, որ ինքն է ժողովուրդի իրա՛ւ ներկայա–ցուցիչը։ Հետեւաբար, պարբերաբար հանրութեան մա–տուցուող հինի ու նորի, սեւի ու ճերմակի, յեղափոխա–կանի եւ հակայեղափոխականի հակադրութիւնները կը միտին օրինականացման ճամբան հարթ պահել մինչեւ՝ նոր սահմանադրութեամբ եւ սահմանադրական դատա–րանով վերջնական ինքնահաստատումը։

Հիմա արդէն իրերու ընթացքը կը թուի հասած ըլ–լալ յեղափոխութեան վերջին հանգրուանին ուր գործա–դիր իշխանութիւնը, սահմանադրական փոփոխութիւն–ներ իրականացնելով պիտի ձգտի ինքզինք եւ իր դաւա–նած մտքերը յաւերժացնել։ Այս ճիւղին մէջ սակայն, գի–տակցաբար կը ստորադասուին օրէնքն ու օրէնքի գե–րակայութիւնը գուտ քաղաքական նեղ շահերու, ի խնդրի՝ յեղափոխութեան երթը հանրաքուէի ճամբով հասցնելու իր դասական աւարտին։

Արտաքուստ այս տրամաբանութեամբ ներկայա–նալով հանդերձ, երեւոյթները ցոյց կու տան, որ սահ–մանադրութեան փոփոխութիւնն ու սահմանադրական դատարանի անբաղձալի դատաւոր անդամներէն ձեր–բագատուիլն անգամ բաւարար կրնան չըլլալ երկրէն ներս յեղափոխութեան աւարտը «աւետելու» համար։ Իրողութիւն մը, որ կրնայ լուրջ մարտահրաւէրներու առջեւ կանգնեցնել ամբողջ երկիրը ինչպէս ներ–ազգա–յին այնպէս ալ արտաքին քաղաքական առերեսումնե–րու հարթակներուն վրայ։ Հետեւաբար, նաեւ ա՛յս պա–րունակին մէջ պէտք է տեղադրել ու բացատրել (նաեւ հետեւութիւններ ընել) վարչապետ՝ Պրն. Փաշինեանի Միւնիխի Ապահովութեան Համագումարին (որ տեղի ունեցաւ Գերմանիոյ Միւնիխ քաղաքին մէջ Փետրուար 14 –16, 2020–ին) արտայայտած հետեւեալ միտքը.– «Հնարաւոր չէ կոնֆլիկտը լուծել մէկ կամ երկու գոր–ծողութեամբ. Բանակցային գործընթացում անհրաժեշտ են «միկրո յեղափոխութիւններ», ապա «մինի յեղափո–խութիւններ», ապա ճեղքում»։

Ուշադրութիւն դարձնենք վարչապետի «միկրօ եւ մինի յեղափոխութիւններ» բառապաշարին որուն պիտի անդրադառնանք քիչ անդին։ Մինչ այդ, շեղում մը ընելով մեր նիւթէն ըսենք, որ համաձայն ըլլալով հան–դերձ, որ բանակցութիւններու ընթացքին ի յայտ եկած լուծումները կ'ըլլան հանգրուանային չենք կրնար հա–մաձայնիլ, որ անոնք կու գան յեղափոխութիւններու որպէս արդիւնք ինչ չափերու ալ ըլլան այդ յեղափո–խութիւնները՝ «մինի» թէ «միկրօ»։ Մենք կը հաւա–տանք, որ լուծումները կը ձեւակերպուին ա՛յո հանգր–ուանային ձեւով բայց՝ բացառաբար հիմնուած բարեշր–ջային եւ հոլովոյթային օրինաչափութիւններու վրայ։ Լուծումները կրնան հիմնուիլ յեղափոխութիւններու վրայ այն պարագային օրինակ՝ երբ անոնք կը պար–տադրուին այս կամ այն հասարակութեան մեկնելով պատերազմի մը արդիւնքներէն եւ կամ երկրի մը պե–տական բոլոր մարմինները, ներառեալ սահմանադրա–կան դատարանը, ամբողջապէս գաւթած իշխանութեան մը ժողովուրդի ձայնը շահարկման (manipulate) ճամբով ուղղորդելու պարագային։

Վերադառնալով վարչապետի Միւնիխի մէջ ար–տայայտած եւ վերեւ յիշուած արտայայտութեան աւելց–նենք, որ միտքը ինքնին բարացուցական է եւ կը բացա–յայտէ գործադիր իշխանութեան յեղափոխութեամբ «սիրահարուած» ըլլալու բարդոյթը։ Հետաքրքիր է եւ միաժամանակ կարեւոր, որ Պրն. Փաշինեանը արբեցած

հայաստանեան «յեղափոխութեան» իրեն պարգեւած միանձնեայ որոշումներ կայացնելու (միշտ չարաշահե–լով ժողովուրդի անունը) կարգավիճակով, կ'ուզէ յեղա–փոխութիւն ներդնել ամէնուրեք, նոյնիսկ հոն ուր յե–ղափոխութիւնները չեն կրնար գոյութիւն ունենալ։ Տպաւորութիւնը այն է, որ յեղափոխութիւն հասկացու–թեան եւ արարքի գիւտն է, որ կարծէք հեղինակուած է ու այդ գիւտի կիրառման նոր ասպարէզներու փնտռութի հեւքին մէջ ենք։

Այսօրինակ տարուածութիւնը յեղափոխութեամբ առիթ կու տայ ենթադրելու, որ սահմանադրական դա–տարանի անդամներու փոփոխութեան խաչակրութեան ետին կանգնած է նաեւ՝ վերեւ յիշուած «յեղափոխու–թեան տրամաբանութիւնը»։ Հետեւաբար, այս մօտեց–ման լոյսին տակ, սահմանադրական դատարանի դէմ շղթայագերծուած խաչակրութիւնը կրնայ եւ վերջինը չըլլալ։ Ընդհակառակը՝ կը ստացուի, որ երկրի կառա–վարման բոլորովին նոր մոդելի մը որդեգրման նախա–չեմին կը գտնուինք։ Նոր մոդել մը ուր ամէն ինչի լու–ծումը պէտք է տեղադրուի յեղափոխութեան պարու–նակին մէջ եւ պէտք է իրականանայ յեղափոխութեամբ կամ՝ «մինի» եւ «միկրօ» յեղափոխութիւններով։

Այս բոլորէն մեկնելով կրնա՞նք հզրակացնել, որ մեր երկիրը պիտի դիմագրաւէ ժամանակաշրջան մը (առնուազն մինչեւ այն ատեն, որ ներկայիս գործադիրն է կացութեան տէրն ու տիրականը) երբ խնդիրները պի–տի լուծուին յեղափոխութիւններով եւ յեղափոխու–թիւններու ամենատարաբնոյթ դրսեւորումներով։ Յե–տին ականարկով կարելի է նոյնիսկ ըսել, որ «մինի» եւ «միկրօ» յեղափոխութիւններու օրինակներ էին Ազգա–յին ժողովի շէնքի եւ դատարաններու շրջափակման (եւ նմանօրինակ այլ դէպքեր) գործողութիւնները։ Պատ–րա՞տ է մեր երկիրը (հասարակութիւնը) այս նոր ուղ–ղութեան։Ամենայն համոզմամբ կ'ըսենք, որ երկիրն ու հասարակութիւնը չեն կրնար արդիւնաւէտ ղեկավար–ուիլ, զարգանալ եւ բարգաւաճիլ մշտական յեղափո–խութիւններով եւ կամ յեղափոխութիւններու սպառ–նալիքը իրենց գլխուն վերեւ կախուած։ Ո՛չ ալ միջազ–գային մակարդակի բանակցութիւնները (ինչպէս օրի–նակ Արցախի հարցով ընթացող բանակցութիւնները) կրնան յառաջընթաց արձանագրել հենելով «մինի» եւ «միկրօ» յեղափոխութիւններու վրայ։ Ինչպէս երկիր–ներ, այնպէս ալ բանակցութիւններ կը զարգանան ու կ'արդիւնաւորուին կայուն իմացականութեան, մտածո–ղութեան եւ միջավարի առկայութեան պարագային ուր ազգային եւ համազգային շահերու գերակայութիւնը եւ ո՛չ «մինի» եւ «միկրօ» յեղափոխութիւններու ներդնումը, կ'ըլլայ գերիշխող նպատակ։

Անտեսելով եւ մաս չկազմելով Ապրիլ 5, 2020–ի հանրաքուէին, ինչպէս յայտարարած էր Հ.Յ.Դ. Հայաս–տանի Գերագոյն մարմինը իր Փետրուար 13, 2020–ի յայտարարութեամբ, ժողովուրդը առիթը պիտի ունենայ ցոյց տալու գործադիր իշխանութեան, որ – ա) պէտք չէ՛ գինք անդադար եւ անհարկի շահարկեն, ներքաշելով ապօրինութիւններու մէջ, քաղաքական նեղ շահեր իրականացնելու համար, բ) պէտք չէ՛ երկիրը ենթարկեն անհարկի ցնցումներու եւ բեւեռուածութեան երբ՝ խնդիրներու լուծման համար գոյութիւն ունին օրէնք–ներ եւ ընթացակարգ նոյնիսկ այն պարագային երբ՝ այդ օրէնքներն ու ընթացակարգը բարեփոխման կարիք ունենան։

Ժողովուրդը մի անգամ ընդմիշտ պիտի գայ ըսե–լու, որ ինք կը մերժէ ենթարկուիլ անխտիր բոլոր այն ոյժերուն որոնք կը փորձեն իրենց քաղաքական խնդրի–ները լուծել ժողովուրդի հաշւոյն եւ գործող օրէնքներու յստակ խախտումներով։

Գործադիր իշխանութիւնը պէտք է հասկնայ, որ «յեղափոխութիւնը» բոլոր իր դրական ձգտումներով հանդերձ ալլեւ անցեալ է իսկ երկիրը անցեալին նայե–լով կամ յանգած «յեղափոխութիւնը» պարբերաբար նոյնիսկ իր «մինի» եւ «միկրօ» տեսակներով վերակեն–դանացնելու փորձերով չի կրնար յառաջընթաց արձա–նագրել։ Ժամանակն է լծուելու երկիրը արդիւնաւէտ կառավարելու գործին, եւ ընթացքին՝ երկրէն ներս վե–րահաստատել համագործակցութեան եւ բազմակարծու–թեան առողջ մթնոլորտ միացեալ ոյժերով դիմագրաւե–լու համար երկրի առջեւ ծառացած ներքին եւ արտաքին բազում մարտահրաւէրները։

Մուրադ Մաճուկեան



ԳԱՆԱՏԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ԿՐՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

ԱՌԱՋՆՈՐԴԻ ԽՕՍՔ

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԴՈՐԻՉԻ ՄՈՒՏՆ Ի ՎԻՐԱՊՆ ՏՕՆԸ՝ ՈՒԽՏԻ ՕՐ ԱՆԹԻԼԻԱՄԻ



28 Մարտին, Հայց. Առաքելական Ս. Եկեղեցին պիտի տօնէ Ս. Գրիգոր Լուսաւորիչի Մուտն ի Վիրապն տօնը, իսկ 29 Մարտին՝ Ուխտի օր Անթիլիասի։

Այս գոյգ տօները ո՛չ միայն մեր անցեալին պատկանող պատմական դէպքերու քննութեան օրեր են, այլև՝ մեր հաւատարմութեան և քրիստոնէական ուխտին ներհայեցողական ակնարկով նայելու օրեր՝ Հայց. Առաքելական Ս. Եկեղեցիին հանդէպ մեր հաւատքը ամուր պահելու համար։

Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայրապետ Քրիստոսի հանդէպ ունեցած իր հաւատքով ու իր աղօթքներով կրցաւ տոկալ Խոր Վիրապի 13 տարիներու գրկանքներուն ու չարչարանքին։

Քրիստոսի հաւատքով զօրացած, ան դարձաւ Հայաստան աշխարհը

այլակերպող լուսածաղկեալ գաւազանը, և այդ հաւատքն էր, որ կարելիութիւն ընծայեց կարգաւորելու մեր Մայրենի Եկեղեցին՝ Առաքելական Ս. Եկեղեցին։

Ինչպէս Քրիտոս փարատեց այս աշխարհի խաւարը, նոյնպէս ալ Ս. Գրիգոր Լուսաւորիչ յաղթանակելով Խոր Վիրապի խաւարին՝ լոյս սփռեց Հայոց համայն աշխարհին։ Ան Ս. Թադէոսի և Ս. Բարթողիմէոսի առաքելութեան կնիքը հանդիսացաւ, միննոյն ժամանակ, սկիզբ դրաւ նոր առաքելութեան մը, որ պիտի շարունակուէր մեր Ս.Թարգմանիչներու՝ Ս.Սահակի և Ս.Մեսրոպի միջոցով, իր ներկայութիւնը պիտի հաստատէր Տէր Զօրի, Սարդարապատի և մինչև իսկ ներկայ մեր ժամանակներուն մէջ։

Ս. Գրիգոր խաւարի դէմ իր տարած յաղթանակով, ամբողջովին յեղաշրջեց Հայոց աշխարհն ու հայութեան նկարագիրը

Այսօր, մենք ևս, որպէս ազգ և մարդկութիւն, կը գտնուինք հաւատքի պահպանման միևնոյն պայքարին մէջ։ Ներկայ ժամանակներուն թշնամին անտարբերութիւնն է, որ դէպի ետ կը մղէ ժողովուրդը և կը կասեցնէ անոր յառաջխաղացքը դէպի Ս. Գրիգորի պատրաստած **Լոյսի Բնակարանը՝ դէպի Եկեղեցին Հայոց։**

Այսօր մենք պէտք է վերանորոգենք մեր հաւատքը, վերանորոգենք մեր հաւատարմութիւնն ու նուիրումը, երդուելով միշտ վառ պահել մեր եկեղեցւոյ, ազգութեան ու ժողովուրդին սուրբ ճրագը։

Հետևաբար, այս տօնը ոչ միայն ոգեկոչման ու յիշեցումի առիթ է, այլև՝ մեր հաւատքի ճրագը վառ ու ճառագայթող պահելու ուխտի օր, որովհետև առանց այդ հաւատքի լոյսին՝ մեր կեանքը խաւարի մէջ կորսուելու ենթակայ կ'ըլլայ։

Ձեր հաւատքը միշտ կանգուն և ուժեղ մնայ, իսկ ձեր հոգիները՝ լոյսի անկարօտ։

Թող Ս. Գրիգոր Լուսաւորիչի հաւատքի լոյսը միշտ անմար մնայ և յալիտեանս տարածուի Հայոց աշխարհի մէջ։

ԲԱՐԳԷՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՉԱՐԵԱՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ



Հայ Եկեղեցին մէկ մասն է Քրիստոնէական Ընդհանուր Եկեղեցւոյ։

Քրիստոնէութիւնը ամբողջ աշխարհին մէջ տարածուած երկու-հազարամեայ կրօնք մըն է։

Բացի կրօնական իր նկարագրէն և դերակատարութենէն, Հայաստանեայց Եկեղեցին ունի նաև Ազգային դիմագիծ և սերտօրէն կապուած է Հայութեան կեանքին՝ թէ՛ անցեալին և թէ՛ ներկայի։ Այս պատճառով ալ անհրաժեշտ է սերտել Հայ Եկեղեցւոյ պատմութիւնն ու կառոյցը լաւ հասկնալու համար Հայ ժողովուրդին քաղաքական և քաղաքակրթական կեանքն ու պատմական հոլովոյթը։

Հայոց պատմութեան էջերէն գիտենք, որ Եկեղեցին շատ կարևոր ազդեցութիւն և դերակատարութիւն ունեցած է մեր մտաւոր զարգացումին (գրականութիւն և արուեստներ) և քաղաքական ու ընկերային կեանքին մէջ։

Հայ Եկեղեցին այնքան սերտօրէն շաղուած է հայ կեանքին հետ, որ յաճախ դժուար է իրարմէ անջատել ազգային պատմութիւնն ու Հայ եկեղեցւոյ պատմութիւնը։



ՈՒՍԱԴՈՐԻՉ

ՄԵԾ ՊԱՀՔԻ ՀՈԳԵՊԱՐԱՐ ԿԻՐԱԿԻՆԵՐԸ

Ա. ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆԴԱՆ



Մեծ Պահքը կը սկսի Բուն Բարեկենդանի յաջորդ օրը՝ Երկուշաբթի, և կ'երկարի մինչև Ս. Յարութեան Աւագ Շաբաթը:

Աւագ Շաբաթը ևս պահքի շաբաթ ըլլալով, Մեծ Պահքի ընդհանուր տևողութիւնը կը հասնի եօթը (Յարութեան տօնին հետ միասին) շաբաթի կամ 48 օրուան:

Մեծ Պահքը հոգեկան վերանորոգութեան և մեր Փրկչին Յիսուսի Քրիստոսի հրաշափառ Յարութեան պատրաստուելու սքանչելի առիթ մըն է, եթէ անիկա գիտակցօրէն ապրուի:

Բուն Բարեկենդանի Կիրակին նուիրուած է Դրախտի Յիշատակին, երբ նախամարդը դրախտի փափկութեան մէջ կ'ապրէր երջանիկ, և Աստուծոյ մշտական ներկայութիւնը կը վայելէր: Բուն Բարեկենդանի Ս. Գրային ընթերցումները մեզի կը յիշեցնեն, թէ հնազանդութեամբ, պահեցողութեամբ, պատուիրանապահութեամբ և աղօթանուէր կեանքով, դրախտէն արտաքսուածներս վերստին կրնանք դրախտային կեանք ժառանգել:

Գ. ԱՆԱՌԱԿԻ ԿԻՐԱԿԻ



Մեծ Պահքի երրորդ Կիրակին կը կոչուի Անառակի Կիրակի, ըստ Դուկասի Աւետարանին մէջ յիշատակուող «Անառակ Որդի»ի առակին (Դուկ. 15.11-32):

Այս Առակը կը պատմէ մարդու անկման ու ապա վերելքի պատմութիւնը՝ խորհրդանշելով պահքն ու զղջացող անձի փրկութիւնը:

Անառակի Կիրակի օրը կարդացուող ավետարանական հատուածին մէջ կը խօսուին կորսուած դրամի, ոչխարի, բայց և մանաւանդ կորսուած Անառակ Որդիին մասին:

Հայր Աստուած իր հրեշտակներուն հետ կ'ուրախանայ բոլոր այն մեղաւորներուն համար, որոնք զղջալով կ'ապաշխարեն: Անառակի Կիրակին մեզի կ'ուսուցանէ Աստուածային ներողամտութեան և անհուն սիրոյն մասին, յիշեցնելով, որ Երկնաւոր Հայրը միշտ պատրաստ է ներելու, վերստին որդեգրելու՝ սխալներուն անդրադարձող, զղջացող և տուն վերադարձող բոլոր մեղաւորները:

Բ. ԱՐՏԱՔՍՄԱՆ ԿԻՐԱԿԻ



